

ԵՐԳ.

Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Սրբրեսցին արտասուք...
 Կորահրա՛ջ աւետիք.
 Լռեաց շիրմին շառաչուկ.
 Մեաւ մահու սպառնալիք՝
 Որպէս սին հովանիք
 Խուսափեալ ծըւէն առ ծըւէն
 Հալածեցան 'ի Հսկողէն:
 Հերբեալ լուծաւ Հրէից նախանձ.
 Կայ կենդանի մեռեալն անձանց.
 Ահարեկեալ փախչին պահնակք
 Զինաթափք լրկեալք կորքամակք:
 Ո՛վ կայիփաս եւ Աննա,
 Զուր զառածիք. Յարեաւ նա:
Յօդաթուրմ՝ զինչ շուշան
 Ամիոփեալ յերիկուն՝
 Հանգչէր մարմինն հրաշագան:
 Սաւառնեալ սէրն արթուն՝
 Երպարէր զըսպեացն հուն.
 Կորէր նըկարէր նազնի
 Բզտարփատենչ դէմք տէրունի:
 Խայծէին այտք ու աչկունքն անոյ՛ջ՝
 Վառեալք 'ի վարդ եւ 'ի մանոյ՛ջ.
 Ազգումն առեալ Սրբտին յանկարծ՝
 Հոյովէր գանիւն ընկրրկած.
 Խընդրէր զհոգին յԱլիւմբեայ՝
 Որ հրաժարեացն եւօրեայ:
Զարթիր, մի այլ նընջես,
Պարմանիդ կուսածին.
 Հատեր փառօք զասպարէս,
 Կռփահար դու չարին,
 Թափող ըիւր աւարին.
 Դըժոխք եւ մահուն շահապետ՝
 Յաթուրդ հարեալ կան դատափետ.
 Թազմեալքն 'ի ստուերս յիսուն ձիգ դար՝
 Արծարծեցան՝ հոգիք արդար.
 Ազամ Արեւ լուծեալ ըզգոյժ՝
 Վազվողեն յերեսմ՝ կոյս վակժոյժ...:
 Արի, նիրհեալք երջանիկ,
 Լէր մեռելոց անդրանիկ:
 Որպէս բոց 'ի բոցոյ,
 Որպէս լոյս յարայուրջ՝
 Թափանց ընդ վէ՛մն արաստոյ
 Փայլակեաց ել 'ի դուրս,
 Հայեցաւ յընդհանուրս:
 Յառնուլ ճեմ՝ ոտիցըն վըստահ՝
 Հազար հրասափս թանգուղէ մահ:

Ուրախ լերուք երկիր ու երկին
 Միոյ տան յարկք զօդեալ կրկին.
 Ուրախ լեր դու, հօտ անտէրունչ,
 Աւաղիկ հօգիւդ երկնաշունչ.
 Յուպ ըզցըսով ածեալ յուս՝
 Կարաւելով դայ Յիսուս:
Կանխեալ յեւս արեւու
 Կոր արև աշխարհի՛
 Յարեաւ Ստուած այցելու.
 Թըշնամիքն յերերի
 Փախեան զհետ իաւարի,
 Խորտակեալ փաղանդ առ փաղանդ
 Զոկք սանդարաց, վըհից իշխանք.
 Սարսէ Սատան լերի հողանի
 Ի փուշս ալուց անհովանի...:
 Սիրելեաց աչս ածէ Յիսուս
 Յաղթարեր զինու զարդու յուս.
 Չուլեալ 'ի մի զմահ եւ կեանս
 Յանմահութիւնս յաւիտեանս:
Սուգաւ խեռ փարաւուն
 Զովակոծ աշխարհի.
 Կոր Մարիամ, մատրի, ժն,
 Պարազլուխ թմբկուհի
 Եւ հանուրց թազուհի.
 Վերացիք քո սուրբ սըրտի սուգ.
 Միւտ 'ի սենեակ սիրոյդ անձուկ.
 Միմէննեան սուրն անկցի՛ բաց.
 Ահա զզլորեալս յարոյց կանգնեաց
 Որդին քո այդ մէն միածին՝
 Յարուցեալն 'ի յոյս մեր բնաւին.
 Ուրախ լեր նոր կենաց Մայր,
 Գեւ Յիսուսի եմք եղբայր:
Ճընծութեան հարցուք փող
 Կուսազազոջ բաղցրաւաչ,
 Յարեաւ Աստուած մեր յաղթող:
 Փութասցուք ընդ առաջ
 Փարելով յուս եւ յաջ.
 Զեռն ընդ կողին ձերպ կարկառել,
 Ի հուր սըրտէն սէր մեզ վառել.
 Խընդիւ թընդիւ հոսել համբոյր,
 Ընդ հետ շառապն անուշաբոյր,
 Կոխել զմահու կապարծ թափուր,
 Դըժոխոց բըթեալ խայթոց սուր.
 Պարդել ըզգոջ խաչանիշ
 Յանմահութիւն երկնապիշ: